Մեթոդախորհրդարանի աշխատանքների ընթացիկ նիստերի և որոշումների կատարման մասին քննարկումներ:
Նորմատիվ իրավական ակտերի ծանոթացում, փոփոխությունների իրազեկում:
Նախագծային ուսուցման արդյունավետության մշտադիտարկում, ուսուցիչների հաշվետվություններում նաև նախագծային ուսուցման մասին տարեկան հաշվետվության ներառում:

# ԱՌԿԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

- ⌚ 2023-2024 ուստարում սովորողների ուսումնառությունը կազմակերպել հանրակրթական պետական չափորոշով սահմանված կարողունակությունների և վերջնարդյունքների ապահովման ուղղությամբ:
- ⌚ Կազմել առարկայական թեմատիկ պլանները՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները:
- ⌚ Դասերի պլանները կազմելիս հաշվի առնել չափորոշային պահանջները, սահմանել դասերի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները:
- ⌚ Պլանավորել ՏՏՏ դասերը՝ մեղիագործիքների կիրառմամբ առավել արդյունավետ կազմակերպելով դասերը:
- ⌚ Ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ պլանավորելով գիտելիքների ստուգման բանավոր բաղադրիչից բացի նաև գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքները:
- ⌚ Պլանավորել ԿԱՊԿՈւ երեխաների հետ աշխատանքի ձևերը՝ համագործակցելով դպրոցի մասնագիտական աջակցության ծառայության հետ, կազմելով ԱՈւՊ-ներ և սահմանելով կոնկրետ գործողություններ, քննարկել արդյունքները մասնագիտական աջակցությունների ծառայության աշխատակիցների հետ:
- ⌚ Հեռավար ուսուցումը պլանավորել ուսումնական գործընթացի կազմակերպման առկա այլընտրանքների ու հնարավորությունների համատեղմամբ [microsoft.tims.am](https://microsoft.tims.am) հարթակում, այդ հարթակում բացել անձնական էջ և ձևավորել դասարաններ նախապես՝ անհրաժեշտության դեպքում առկայից հեռավար անցումը ապահովելու նպատակով:
- ⌚ Ուշադրության կենտրոնում պահել նախագծային աշխատանքների պլանավորման ողջ ընթացքը՝ թեմայի ընտրությունից սկսած մինչև ներկայացում:

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- ⌚ Սովորողների միավորային գնահատումը կատարել «2023-2024 ուսումնական տարում հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի» կիրառմամբ :
- ⌚ Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար ուսուցիչների կողմից կիրառվեն ուսուցման գործնական, ինտերակտիվ, համագործակցային մեթոդներ, նախագծային:
- ⌚ Ամիսը առնվազն մեկ անգամ իրագործվեն բնագիտության, կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի ՏՏՏ դասեր [esource.armedu.am](https://esource.armedu.am) կայքի ռեսուրսներով , տեսադասերով և գործնական աշխատանքներով:
- ⌚ Էլեկտրոնային դասամատյանների տնային առաջադրանքների առկա գրանցումները մինչև ուստարվա վերջ պետք է համընկնեն տարեկան թեմատիկ պլանավորմանը:
- ⌚ Ուսուցիչների կողմից բացահայտվեն, դիտարկվեն, հետազոտվեն և գնահատվեն երեխաների առկա և հեռավար ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները:

- ⌚ Դասավանդման ընթացքում ուսուցիչները նպաստեն երեխաների մոտ պատշաճ վարքագիծի և վարվելակերպի ձևավորմանը, հիմնականում կիրառվեն համատեղ գրույցներ, փոխհամաձայնություն, ընկերային միջավայր:
- ⌚ Հեռավար կրթությամբ երեխաների հետ գործածել ՀՀ ԿԳՄՄ-ի կողմից ուսումնական գործընթացն հեռավար կազմակերպելու նպատակով գործարկված հարթակը՝ **microsoft.tims.am**:
- ⌚ Տարեկան թեմաները դասավանդվեն լիարժեքորեն բոլոր դասարաններում առաջին կիսամյակում՝ 15 շաբաթ, երկրորդ կիսամյակում՝ 19 շաբաթ՝ ըստ օրինակելի ուսումնական պլանի :
- ⌚ Պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:
- ⌚ Կատարել դպրոցի տնօրինության և լիազոր մարմնի հանձնարարականները, հրահանգները:
- ⌚ Ուշադրության կենտրոնում պահել նախագծերի իրագործման ողջ ընթացքը՝ թեմայի ընտրությունից սկսած մինչև ներկայացում:

### Հ Ե Ռ Ա Վ Ա Ր Կ Բ Թ ՈՒ Թ Յ Ա Ն Ի Ր Ա Գ ՈՐ Ծ ՈՒ Մ

Առկա ուսուցմանը զուգահեռ 2022-2023 ուստարում ևս դպրոցը կիրականացնի հեռավար ուսուցում այն սովորողների համար, որոնք առանձին դեպքերում դպրոց չեն կարող հաճախել, որը սահմանված է հեռավար ուսուցման ԿԱՐԳ-ով: Հեռավար եղանակով ուսուցումը կազմակերպվում է կենտրոնացված՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՄ **նախարարի 20 մայիսի 2020 թ. N 09-Ն հրամանով** հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգով»:

Այս աշխատանքներում ուսուցիչներին և դասղեկներին **անհրաժեշտ է՝**

- ⌚ հետևողական լինել հեռավար կրթության ժամանակահատվածում երեխաների մասնակցությանը microsoft.tims.am հարթակում ապահովելու հարցում,
- ⌚ հեռավար կրթության ժամկետից հետո դպրոց հաճախող աշակերտներին տրվեն թեմատիկ և գրավոր բացթողած աշխատանքներ և գնահատվեն,
- ⌚ պահպանել դպրոց-սովորող-ծնող կապը,
- ⌚ բնագիտական առարկաների ուսուցումը <http://esource.amedu.am/> հասցեով հասանելի դարձնել նաև հեռավար ժամանակավոր ուսուցում ստացող աշակերտների համար: Նշված առարկաներից յուրաքանչյուրի կազմի մեջ մտնող ուսումնական նյութը ներկայացնում է ցուցադրություն, լաբորատոր աշխատանք, գործնական աշխատանք, ինտերակտիվ աշխատանք բաժիններով:

**e-school Armenia** նախագիծը 2022-2023 ուստարում ևս ապահովելու է դպրոցական կրթական ծրագրի բովանդակությունը՝

- 1) տեսադասերի,
- 2) վեբինարների և
- 3) էլեկտրոնային նյութերի միջոցով:

Երեխայի միավորային գնահատումը կիրականացնի դպրոցը՝ ապահովելով երեխաների շարունակական կրթությունը:

# Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանով Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր

2022-2023 ուսումնական տարվա սկզբին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 ապրիլի 2017 թ. N 370-Ն հրամանով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման կարգի» համաձայն ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմել Անհատական Ուսուցման Պլաններ-ներ՝ ներառական կրթությանն աջակցող մասնագետների, ուսուցչի օգնականների կողմից՝ ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ: Ուսուցիչների կողմից սահմանված նպատակները պետք է լինեն՝

- 🕒 չափելի են,
- 🕒 կոնկրետ,
- 🕒 իրագործելի,
- 🕒 ժամանակային առումով պլանավորված:

ԱՌԻՊ-ներում մանրամասն հստակ ներկայացվեն ուսուցչի կողմից երկարաժամկետ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների մակարդակը: Ընթացիկ աշխատանքներում ուսուցչի օգնականները ուսուցիչների հետ համատեղ պետք է դիտարկեն 2023-2024 ուստարվա ընթացքում ԱՌԻՊ-ներում նաև սովորողների վարքագծային խնդիրների շտկմանը և ակադեմիական դժվարություններին ուղղված նպատակադրումները: ՏՄԱԿ-ի մասնագետները, դպրոցի մասնագիտական աջակցող ծառայությունները նույնպես պետք է համագործակցեն ուսուցիչների հետ՝ մշակված ԱՌԻՊ-ները դասարաններում գործողությունների վերածելու հարցում: ԿԱՊԿ ունեցող փոխադրված աշակերտների ուսումնական առաջընթացը բավարար է, սովորողները ներգրավված են ուսումնական ծրագրերում և կրթություն են ստանում դասարանի հետ միասին:

## Ներդպրոցական վերահսկողության համակարգ

Ներդպրոցական վերահսկողությունը հետադարձ կապ է, որն իրականացվում է կառավարման գործընթացում, ըստ անհրաժեշտության, և ամփոփում է մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին:

Ժամանակակից հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի Բազմաձև նպատակային՝ ուղղված է տարբեր հարցերի ուսումնասիրմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնական կազմակերպության բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգության կանոնների պահպանում և այլն), Բազմակողմանի՝ նշանակում է միևնույն ուղղության նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողություն և այլն):

Բազմաստիճան՝ միևնույն ուղղության վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով (ուսուցչի աշխատանքը ուսումնական հաստատությունում վերահսկում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, ԿՊԿԼՄ): Խոսելով

վերահսկողության մասին՝ անհրաժեշտ է տարբերակել վերահսկողության տեսակները, ձևերը և մեթոդները:

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների ՆԴՎ նպատակները.

Ներդպրոցական վերահսկողությունը ուսուցչի աշխատանքի արդյունքների դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է:

**Ներդպրոցական վերահսկողության նպատակն է՝** ստանալ ամբողջական և համակողմանի տեղեկատվություն դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին և առաջացող խնդիրները լուծել համար ժամանակին անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

- Հաստատությանը ներկայացվող արդի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպում՝ ըստ տեղեկատվական բազայի վերլուծության:
- Չափորոշչային պահանջներին համապատասխան սովորողների կրթական մակարդակի ապահովում:
- Ուսուցիչների մեթոդական աջակցության տրամադրում:
- Թերությունների և դժվարությունների վերհանում և շտկում, առաջավոր փորձի փոխանակում և տարածում:

## Ներդպրոցական վերահսկողության հիմնական խնդիրներն են.

- առարկայի ծրագրի կատարողականի պարբերական ստուգում
  - դասվանդվող առարկաների արդյունքների վերահսկողություն
  - աշակերտների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողություն, որի ընթացքում պարզվում է նրանց գիտելիքների մակարդակը, հմտությունների և կարողությունների տիրապետումը, ինքնուրույն սովորելու կարողությունը
  - ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման ժամանակ ուսուցիչներին անհրաժեշտ օգնության տրամադրում
  - ուսուցիչների փորձի ուսումնասիրություն
  - դպրոցի բոլոր տեսակի պլանների կատարման մշտական վերահսկողություն, վարչական որոշումների կայացում:
- Ներդպրոցական վերահսկողության արդյունքում կազմվում է տեղեկանք: Այն պետք է արտացոլի.
- վերահսկողության հիմքը (դպրոցի աշխատանքային պլան, հրաման, հանձնարարական և այլն). — տեղեկատվության ստացման աղբյուրները (հարցաթերթիկ, ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը և այլն).
  - կատարված դասալսումների թիվը.
  - վերահսկողության պլանով տրված հարցերի պատասխանները.
  - հետևություններ և առաջարկություններ:

## Վերահսկվող ուսուցիչը իրավունք ունի.

- իմանալ վերահսկողության տևողությունը և աշխատանքի գնահատման չափանիշները



— իմանալ վերահսկողության նպատակը, բովանդակությունը, տեսակները, ձևերը և մեթոդները.

— ժամանակին ծանոթանալ տնօրինության հետևություններին և առաջարկություններին.

— դիմել վերադաս մարմիններին վերահսկողության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում:

### Ներդպրոցական վերահսկողությունը կիրականացվի երկու ձևով՝

— անհատական,

— կոլեկտիվ:

### Ներդպրոցական վերահսկողության ներքոնշյալ տեսակները կգործածվեն.

— նախնական.

— անհատական մասնագիտական.

— թեմատիկ.

— դասարականական-ընդհանրական.

— կոմպլեքս:

- **Նախնական վերահսկողության** նպատակն է ուսուցչի աշխատանքի մեջ հնարավոր սխալների կանխումը և նրա շախատանքի արդյունավետության բարձրացումը:

- **Անհատական մասնագիտական** վերահսկողության նպատակն է ստուգել մեկ ուսուցչի կամ ուսուցիչների խմբի գործունեությունը որևէ կոնկրետ հարցում: Այս վերահսկողության ժամանակ ստուգողը իրավունք ունի.

— ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնականա ծրագրերին (օրինակ՝ թեմատիկ պլաններին, դասերի պլաններին, դասամատյաններին, աշակերտների տետրերին, ծնողական ժողովների արձանագրություններին)

— կատարել մանկավարժական աշխատաքի վերլուծություն, ուսումնական գործընթացի մշտադիրկում:

- **Թեմատիկ** վերահսկողության նպատակն է համախմբել մանկավարժական կոլեկտիվը որոշակի մանկավարժական խնդիրների լուծման համար: Վերահսկողության թեման ընտրվում է դպրոցի զարգացման և տարեկան պլանների համապատասխան, դպրոցի աշխատանքների վերլուծության արդյունքների: Վերահսկողության արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստում:

- **Դասարանական-ընդհանրական** վերահսկողության նպատակն է պարզել տարբեր ուսուցիչների ազդեցությունը տվյալ դասարանի աշակերտների վրա: Վերահսկողությունը իրականացվում է մեկ առանձին վերցված դասարանում կամ զուգահեռ դասարաններում:

### Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվելու են.

— տվյալ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների գործունեությունը.

— աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում.

— ուսման նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը.

— աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը.

— հոգեբանական մթնոլորտը դասարանում:

Վերահսկողության համար դասարաններ ընտրվում են դպրոցի աշխատանքների վերլուծության արդյունքում: Վերահսկողության տևողությունը կախված է ընդված աշխատանքների ծավալից: Վերահսկողության արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստում:

🕒 **Կումպլեքս** վերահսկողության նպատակն է ստանալ ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ էական ծավալի տեղեկատվություն և դրա հիման վրա իրականացնել տվյալ խնդրի բազմակողմանի վերլուծություն:

Վերահսկողության համար ընտրվում է աշխատանքային խումբ: Խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր պատասխանատվությունների շրջանակը: Վերահսկողության արդյունքները քննարկելու համար հրավիրվում է արտահերթ մանկավարժական խորհրդի նիստ:

## ՆԴՎ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ

- ԴԻՏԱՐԿՈՒՄ
- ՔՆՆԱՐԿՈՒՄ
- ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ
- ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ
- ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ 2023Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024Թ. ՄԱՅԻՍԻՄԻ 10-Ը
  - ❖ դասալսումներ / տնօրենի կողմից՝ շաբաթական 1-2 ժամ, ուս. գծով տնօրենի տեղակալի կողմից՝ շաբաթական 4-5 ժամ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի կողմից՝ 2-3 ժամ, մ/մ նախագահների կողմից շաբաթական 1 ժամ, փոխադարձ դասալսումներ՝ ամսական 1 ժամ/

**Վերահսկողության մեթոդը** առաջադրված նպատակին հասնելու համար վերահսկողության գործնական իրականացման եղանակն է:

Կրթական գործունեության ուսումնասիրման համար վերահսկողության առավել արդյունավետ մեթոդներն են՝

- ✓ Դիտարկում (ուշադիր հետևելով ինչ-որ բանի՝ ուսումնասիրել, հետազոտել),

- ✓ Վերլուծություն (պատճառների բացահայտում, զարգացման միտումների սահմանում),
- ✓ Զրույց (որևէ թեմայով գործնական խոսակցություն՝ մտքերի փոխանակմանը ունկնդիրների մասնակցությամբ),
- ✓ Փաստաթղթերի ուսումնասիրում (փաստաթղթերի հանգամանալից ուսումնասիրում՝ ծանոթանալու, ինչ-որ բան պարզաբանելու նպատակով),
- ✓ Տեղեկագրում (հարցման միջոցով հետազոտման եղանակ),
- ✓ Ժամանակացուցի սահմանում (կրկնվող գործողությունների կատարման համար ծախսված աշխատանքային ժամանակացուցի սահմանում),
- ✓ Գիտելիքների բանավոր կամ գրավոր ստուգում(սովորողների պատրաստվածության աստիճանը բացահայտելու համար):

## ՆԴՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԸՍՏ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ

- ❖ ԵԼԱՅԻՆ
- ❖ ՆԱԽՆԱԿԱՆ
- ❖ ԸՆԹԱՑԻԿ
- ❖ ՄԻՋԱՆԿՅԱԼ
- ❖ ԱՄՓՈՓԻՉ

## ՆԴՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդպրոցական վերահսկողության ուղղություններն են կրթական գործունեության հետևյալ տեսակները՝

- ⌚ Ուսումնադաստիարակչական աշխատանք,
- ⌚ Արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանք,
- ⌚ Մեթոդական աշխատանք,
- ⌚ Փորձարարական և գիտահետազոտական աշխատանք:

## ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

- ⌚ ԿՊԿԼՍ (Կրթության պետական կառավարման լիազորված մարմին)
- ⌚ Տնօրեն

- ⌚ ՏՈՒԱԳՏ (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)
- ⌚ ՄԿԱԳՏ (մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ)
- ⌚ Առարկայական մեթոդախափորման նախագահ
- ⌚ Հատուկ հրավիրված մասնագետ

## ՆԴՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը, լինելով շարունակական գործընթաց, իրականացվում է որոշակի շրջափուլերով և վերջին փուլը նրա արդյունքների ամփոփումն ու որոշումների ընդունումն է, քանի որ ներդպրոցական վերահսկողությունը ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղված է ուսումնադաստիարակչական գործընթացի կարգավորմանն ու կատարելագործմանը: Այս փուլում հավաքված տեղեկատվության ամփոփումից, վերլուծությունից հետո արդյունքները քննարկվում են խորհրդակցություններում, ժողովներում կամ մեթոդախափորման նիստերում և այդ քննարկումների հիման վրա մշակվում են հանձնարարություններ , ընդունվում են որոշումներ:

Այսինքն՝ արդյունքների մշակումը, ըստ էության, լինելով վերահսկողության կոնկրետ շրջանի վերջին փուլ, միաժամանակ դառնում է հետագա աշխատանքի պլանավորման հիմք:

## ՆԴՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Դպրոցի ներքին վերահսկողության կարևորությունը թելադրում է նրա շարունակական զարգացում և կատարելագործում, ինչը նպատակային է իրականացնել երկու ուղղությամբ : Առաջինը վերահսկողության աշխատանքի գիտամեթոդական մակարդակի բարձրացումն է .այն ենթադրում է, որ բոլոր այն աշխատողները, ում վստահված է վերահսկել ուսուցչի աշխատանքը, պիտի լիարժեքորեն տիրապետեն այդ վերահսկման մեթոդիկային, պիտի կարողանան զուգակցել բարձր պահանջկոտությունը և բարեկիրթ վերաբերմունքը, պիտի լինեն սկզբունքային, հետևողական և, բնականաբար, պիտի ունենան գիտամանկավարժական լայն մտահորիզոն:

Երկրորդ ուղղությունը վերահսկողության և ինքնավերահսկողության զուգակցումն է: Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի դիտարկումը, հաշվառումն ու ստուգումը վերահսկողություն է, իսկ երբ այդ նույն խնդիրների լուծման գործում մանկավարժական համակազմն է ակտիվորեն մասնակցում, ինքնավերահսկողություն է:

Ընդ որում՝ ինքնավերահսկողությունը լինում է ոչ միայն մանկավարժական համակազմի, այլև յուրաքանչյուր աշխատողի աշխատանքում: Ուսուցիչն ամեն օր պլանավորում է իր դասը, հետո վերլուծում նրա ընթացքը, վերհանում առաջացած դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիներ որոնում, այսինքն՝ ուսուցչի ամենօրյա աշխատանքը յուրօրինակ ինքնավերահսկողություն է և մեծապես նպաստում է ուսուցման գործընթացի գիտական կազմակերպմանն ու մանկավարժական պատասխանատվության բարձրացմանը:

Կարևոր է նաև փաստել, որ հենց հմտորեն ու ճիշտ կազմակերպված ներդպրոցական վերահսկողությունն է զարգացնում աշխատողի ինքնահսկողությունը:

Այսպիսով՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչը՝ ներդպրոցական վերահսկողությունը, ունի բնութագրող, վերափոխող, խթանող, ուսուցանող, զարգացնող և դաստիարակող նշանակություն, և նրա հաջող իրականացմամբ է պայմանավորված կրթական գործընթացի որակը:

**ՆԴՎ շրջանակներում առարկայական դրվածքներ, դասավանդման որակի ուսումնասիրություններ, դասալսումներ այդ ուղղությամբ**

№	Թեմատիկա	կատարման ժամկետ	նպատակը	ՆԴՎ ձև
1	<ul style="list-style-type: none"> <li>❖ Ջարգացնող, ուսումնական խաղերի կիրառումը 1-ին դասարանում:</li> <li>❖ Ուսուցման կազմակերպման ձևերը, ակնկալվող վերջնարդյունքների հասնելու ուսուցչի մասնագիտական</li> </ul>	հոկտեմբեր	-խաղերի ձգտումը զարգացնել 6 տարին նոր լրացած երեխայի մոտ, դիդակտիկ խաղերը կարևորել որպես ճանաչողական գիտելիքների ձեռքբերման միջոց:	Դասալսումներ, դասերի նպատակայնության և արդյունավետության քննարկումներ, դասարանական ընդհանրակ

<p>մոտեցումները՝ ըստ պետական չափորոշային և առարկայական չափորոշիչների /2-9 դաս./</p> <p><b>Առարկայական նախընտրություններ՝</b> հայոց լեզու, գրականություն, մայրենի, մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, հայոց պատմություն, օտար լեզուներ, բնագիտական առարկաներ:</p>		-կարևորել վերջնարդյունքները՝ որպես առարկայական ծրագրերի կատարման ուղենիշ, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության ձևավորման բաղադրիչ, որոնք բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:	ան դիտարկումներ, ուսուցիչների գործունեության անբազմակողմանի վերլուծություն, ֆրոնտալ ստուգումներ :
<ul style="list-style-type: none"> <li>❖ &lt;&lt; Մայրենի &gt;&gt;</li> </ul>	Հոկտեմբեր-նոյեմբեր	ա) Սովորողների ընթերցանության ուսումնասիրում 2-3րդ դասարաններում: բ) 1-ին դասարանում- դասալսումներ:	

2	<p>❖ Ռուսաց լեզվի ուսուցումը 2-12-րդ դասարաններում:</p> <p>/նախալրբենական շրջանի նախագիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ձևավորումը կրտսեր դպրոցում/</p> <p>/ լեզվախմացությունը, լեզվամտածողությունը հիմնական դպրոցում/</p> <p><b>Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը՝</b> դերային</p>	<p>նայեմբեր</p>	<p>- Ռուսաց լեզվի դրվածքի ուսումնասիրություն, առարկայի կարևորում, - աշակերտների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողություն, որի ընթացքում պարզվում է նրանց գիտելիքների մակարդակը, հմտությունների և կարողությունների տիրապետումը,</p>	<p>Դասալսումներ, դասի պլանավորման քննարկումներ, դասերի փուլայնության դիտարկումներ, աշակերտների ներգրավվածության ուսումնասիրում, ռուսաց լեզվի ԳԿՀ իմացական մակարդակի</p>
---	--	-----------------	---	---

<p>խաղեր, բաց դասեր, դասախոցառումներ, պոեզիայի ժամեր, S2S դասեր, մուլտիմեդիաներ, գրավոր աշխատանքներ, «լավագույն ձեռագիր» մրցույթ:</p> <p>Բաց դաս «В гостях у сказки» Բաց դաս 6-րդ դաս. «<b>Прямое и переносное значение</b>»</p> <p>Ուրախ դասախոց Բաց դաս 6-րդ դաս «Языкиэто так просто»</p> <p>««Про козленко, <b>который умел считать до десяти</b>»» 4-րդ դաս</p> <p>❖ Արտադասարանական ընթերցանություն /3-4 դաս./</p>		<p>ինքնուրույն սովորելու կարողությունը: - դասերի կազմակերպման ձևերը, նորի ուղերձը, - երեխաների ակտիվությունը և ներգրավվածությունը դասապրոցեփին:</p> <p>-գնահատել սովորողների ընթերցելու կարողությունները, վերլուծել և մշակել գործողությունների ընթերցանության բարելավման ուղղությամբ: - կարևորել ընթերցանությունը որպես սովորողների գնահատման գործիք: - ընթերցանության ուսուցման</p>	<p>ուսումնասիրում:</p> <p>Դասալսումներ, ընթերցանության կազմակերպման ձևերի քննարկումներ, աշակերտների ներգրավվածության ուսումնասիրում, ընթերցանության մշտադիտարկում:</p>
--	--	--	--

		արդյունքների մշտադիտարկում:	
❖ << Մաթեմատիկա >>	Նոյեմբերդեկտեմբեր	<<Մաթեմատիկայի դրվածքը 4-րդ դասարանում >>- դասավտումներ.	

<p>3</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ «Ես և Երաժշտությունը» խորագրով մեկշաբաթյա փաթեթ / 1-7 դաս./</li> <li>❖ «Ոչ միայն նկարում ենք, այլև՝ մեկնաբանում» խորագրով առարկայական շաբաթ /1-7 դաս./</li> <li>❖ «Շախմատ ենք խաղում» խորագրով առարկայական շաբաթ /2-4 դաս./</li> </ul> <p><b>Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը՝</b> դերային խաղեր, բաց դասեր, դաս-</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>- Երաժշտությունը, տեխնոլոգիան և կերպարվեստը որպես ուսումնական առարկաներ, որոնք կարևոր դեր ունեն երեխայի՝ իբրև մարդ -անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական,</p>	<p>- դասալսումներ, դիտարկումներ, ուսումնասիրություններ՝ անհատական և կոմպլեքս, - գնահատման ձևերի կիրառումը գործնական</p>
---	------------------	---	---



	<p>միջոցառումներ, ցուցահանդեսներ, SՀS դասեր, երաժշտական ունկնդրումներ, մուլտիմեդիաներ, խմբային աշխատանքներ, հայ շախմատիստներ, շախմատային մրցաշարեր՝ միջդասարանային և ներդասարանային:</p>		<p>հուզական որակներով: - սովորողների ստեղծագործելու համար պայմանների ստեղծում, -կամային որակների զարգացումը կրտսեր դպրոցականների մոտ շախմատի դասերին, համագործակցություն, մրցակցություն:</p>	<p>աշխատանքներում, - գեղագիտական նախասիրությունների զարգացման մակարդակի դիտարկում, - նոտագրության ստուգումներ , - տեխնոլոգիայի դասավանդման ձևերի և մեթոդների դիտարկում, - շախմատի գործունեության ուսումնասիրում:</p>
5	<p>❖ «Մարմնամարզական ընդունակությունների զարգացումը կրտսեր դպրոցում» /1-4 դաս/</p> <p><b>Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը</b> միջդասարանային մրցաշարեր, քանավոր դասեր, ներդասարանային մրցաշարեր, ավանդական դասեր:</p>	<p>հունվար</p>	<p>-առողջ, համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը պատրաստ, սեփական ուժերի հանդեպ վստահ, առողջ և անվտանգ կենսակերպ դրսևորող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող ու նախաձեռնող քաղաքացի</p>	<p>Դասալսումներ, քննարկումներ, գնահատման համակարգի կիրառման մոնիթորինգ, ստուգաքննների նախապատրաստման աշխատանքների կազմակերպման արդյունավետ</p>

			<p>ձևավորելը՝ առարկայից ելնելով:</p> <p>-առողջ ապրելակերպի ԳԿՀ մակարդակը 8-9 դասարաններում:</p>	<p>տ մեխանիզմների դիտարկում և քննարկում:</p>
6	<p>❖ «Միբում եմ քեզ ,իմ մայր լեզու» խորագրով միամսյակ /3-4 դաս./ Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը բաց դասեր,ՏՀՏ դասեր,դերային խաղեր-ներկայացումներ, ,ավանդական դասեր,պատի թերթերի լույսընծայում, Մեծ ն լոռեցու ստեղծագործությունների քննարկում,«Ազգային գրադարանային շաբաթ»,ընթերցումնրպեզիայի ժամեր,գրական երաժշտական միջոցառումներ,հայկական կինոների դիտումներ,Խնկոյանական օրեր: Օրագիր հայ գրողներ -Հ. Թումանյանի ստեղծագործությունները այլ լեզուներում: Դարերդ հայերեն են գալու: Թումանյանի հետ, Հ. Սահակյան &lt;&lt; Ինձ բացակա չդներ&gt;&gt; Քաջ Նազարը, Թումանյան անմահ ստեղծագործությունները, Անադարտպահենք մեր մայրենին:</p>	<p>փետրվար</p>	<p>-մայրենիի,հայոց լեզվի և գրականության չափորոշային վերջնարդյունքների ապահովում, - գրադարանաշակերտ կապի ամրապնդում, -սերը դեպի գիրքն ու ընթերցանությունը,մ իմյանց գիր նվիրելու ավանդույթի պահպանում, - հայոց լեզվի դրվածքի ուսումնասիրություն, առարկայի կարևորում:</p>	<p>Դասալսումներ,գրավոր աշխատանքներ,ԳԿՀ համակարգի մակարդակի ուսումնասիրումներ,կենտրոնացված քննությունների և գիտելիքների ստուգումների նախապատրաստման աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների դիտարկում և քննարկում:</p>

	<ul style="list-style-type: none"><li>❖ Լեզվական գիտելիքների ուսուցումը,</li><li>❖ &lt;&lt; Մայրենիի դասերին&gt;&gt;-դասի դրվածքը 4-րդ դասարանում:</li></ul>			
--	--	--	--	--

❖ «Մոզականը մաթեմատիկայում» առարկայական միամսյակ /2-9 դաս./

❖ « **Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը**՝ Բաց դասեր,ՏՀՏ դասեր,վիկտորինաներ, ,ավանդական դասեր,պատի թերթերի լույսընծայում,մուլտիմեդիաներ,տեղեկատվական դասեր ,Պի թվի մարաթոնը,գրավոր աշխատանքներ:

❖ Անգլերենի ուսուցումը դպրոցում /3-12 դաս./ Բաց դաս- << Holidays>> **Միջոցառում <<Beauty and the Beast>> Բաց դաս. <<Season>> 5-րդ դաս.**

Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը՝ Բաց դասեր,ՏՀՏ դասեր, տեղեկատվական դասեր ,միջոցառումներ,գրավոր աշխատանքներ:

մարտ

- մեծացնել սերը և հետաքրքրությունը մաթեմատիկայի և ինֆորմատիկայի նկատմամբ ցույց տալ մաթեմատիկայի հետաքրքիր և առեղծվածային կողմերը, - չափորոշչային վերջնարդյունքների ապահովում, - գործնական հմտությունների ձևավորումը մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցման գործընթացում, - զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողության ուղղությամբ տարվող աշխատանքները,

-մաթեմատիկայի դրվածքի ուսումնասիրություն, առարկայի կարևորում:

Դասալսումներ,գրավոր աշխատանքներ,ԳԿՀ համակարգի մակարդակի ուսումնասիրումներ,կենտրոնացված քննություններ և գիտելիքների ստուգումներ ի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների դիտարկում և քննարկում:

<p>8</p>	<p>❖ «Բնագիտական շնչով» խորագրի ներքո առարկայական շաբաթներ /Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, ես և շրջակա աշխարհը/</p> <p><b>Դասերի կազմակերպման ձևերի ընտրանքը՝</b> Բաց դասեր, ՏՀՏ դասեր, վիկտորինաներ, ,ավանդական դասեր, պատի թերթերի լույսընծայում, մուլտիմեդիաներ, տեղեկատվական դասեր ,Երկրի օր, Ձրի օր, Կենսաբազմազանության օր,, Մեծն աստղագետը, գրավոր աշխատանքներ:</p> <p>Բաց դաս- &lt;&lt; Պահպանենք մեր մոլորակը&gt;&gt;</p> <p>Էքսկուրսիա- &lt;&lt; Բնության թանգարան&gt;&gt;</p> <p>Վիկտորինա -&lt;&lt;</p> <p>Գրաճանաչության և թվաճանաչության ստուգում/ 1-ին դաս./</p>	<p>ապրիլ</p>	<p>-բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն, առարկայի կարևորում սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում, - ԳԿՀ համակարգի մակարդակի ուսումնասիրում ,չափորոշային վերջնարդյունքների կարևորում:</p> <p>Նախագիտելիքների ստուգում կրտսեր դպրոցի առաջին դասարաններում, - ձևավորող գնահատման գործիքի կիրառումը:</p>	<p>Դասալսումներ, գրավոր աշխատանքներ, ԳԿՀ համակարգի մակարդակի ուսումնասիրումներ, քննությունների նախապատրաստման աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների դիտարկում և քննարկում:</p> <p>ՆԴՎ ձևերը՝ դասարանական ընդհանրական, կոմպլեքս ,անհատական:</p>
<p>9</p>	<p>❖ Ռուսերենի տառաճանաչությունը կրտսեր դպրոցում</p> <p>❖ /2-րդ դաս./</p> <p>❖ « Դասերի կազմակերպման ձևերի</p>	<p>մայիս</p>	<p>-տառերի իմացության ստուգում կրտսեր դպրոցի 2 դասարանում ռուսաց լեզվից, - լեզվաիմացության նախագիտելիքների մշտադիտարկում:</p>	<p>Գրավոր աշխատանքներ, դիտարկումներ, քննարկումներ:</p> <p>Դասալսումներ, գրավոր</p>

<p>ընտրանքը՝ Բաց դասեր, SՀS դասեր, ,ավանդական դասեր, պատի թերթերի լույսընծայում, մուլտիմեդիաներ, տեղեկատվական դասեր ,Հաղթանակներ օր, «Լմ սիրելի պատմական կերպարը» շարադրությունների մրցույթ ,գրավոր աշխատանքներ:</p>		<p>- պատմահասարակագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն, առարկայի կարևորում սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում,</p> <p>- հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում:</p>	<p>աշխատանքներ, ԳԿՀ համակարգի մակարդակի ուսումնասիրումներ, քննությունների նախապատրաստման աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների դիտարկում և քննարկում:</p>
--	--	---	--

### 2023-2024 ուստարում իրագործվող հիմնախնդիրներ

1. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
2. Ուսումնական ծրագրերի կատարում
3. Ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում
4. Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում
5. Մեթոդական աշխատանքների կանոնակարգում
6. Առարկայական մասնախմբերի աշխատանքների ղեկավարում
7. Դասավանդման որակի վերահսկում
8. Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման վերահսկում
9. Ուսուցչի լավագույն աշխատանքի, դրական փորձի տարածում
10. Ուսուցիչներին կրթական և մանկավարժական ոլորտներում տեղ գտած նորությունների և փոփոխությունների իրագեկում

Աշխատանքների կազմակերպումը / տարրական դպրոց/ 2023-2024 ուստարում

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Նշումներ
1.	Կատարել վերջնական դասաբաշխում և ուսումնական պլանով նախատեսված դպրոցական բաղադրիչի բաշխում	Օգոստոս	Տնօրեն, փոխտնօրեն՝ ու/դ գծով	
2.	Առարկայական մասնախմբերի շրջանակներում քննարկել և մասնագիտական մեթոդական նամակները	Օգոստոս	Փոխտնօրեն, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
3.	Վերանայել դասագրքային ֆոնդը, լրացնել պակասը	Օգոստոս	Տնօրեն, փոխտնօրեն՝ ու/դ գծով, գրադարանի վարիչ	
4.	Գրադարանի մեթոդական բաժինը հարստացնել մեթոդական և	Օգոստոսսեպտեմբեր	Փոխտնօրեն՝ ու/դ գծով, գրադարանի վարիչ	

	մասնագիտական գրականությամբ			
5.	Կազմել կայուն դասացուցակ, պահպանել դասացուցակի ներկայացվող պահանջները	օգոստոս, հունվար	Փոխտնօրեն ու/դ գծով	
6.	Ուսուցիչներին ապահովել առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ	Օգոստոսսեպտեմբեր	Փոխտնօրեն՝ ու/դ գծով, գրադարանի վարիչ	

7.	<p>2-րդ դասարանում կազմակերպել քննարկումներ նոր ՀՊԶ-ի հետ կապված: Դասագրքերի, ուսպլանի, տարեկան պլանի քննարկում:</p>	Օգոստոս	Փոխսնօրեն՝ ու/դ գծով, դասվար, մ/մ նախագահ	
8.	<p>Հրավիրել առարկայական մասնախմբերի ղեկավարների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ դպրոցում ուսումնասիրատիարակչական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով</p>	Օգոստոս	Տնօրեն, փոխսնօրեններ	
9.	<p>Լսել առարկայական մասնախմբերի գործունեության տարեկան հաշվետվությունը ինքնավերլուծության հիման վրա, տալ գնահատական</p>	Օգոստոս	Տնօրեն, փոխսնօրեններ, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
10.	<p>Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների</p>	Սեպտեմբերի 1-5	Փոխսնօրեն ու/դ աշխ. գծով, մասնախմբերի ղեկավարներ	

<p>համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն տնօրենությանը:</p>			
---	--	--	--



11.	Պարբերական աշխատանք տանել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր մակարդակի հասցնելու համար	Մշտապես	Փոխսնօրեն ու/դ աշխ. գծով, ՆԶՊ և պատմության ուսուցիչներ	
12.	Առարկայական մասնախմբերի նիստերում քննարկել նրանց տարեկան աշխատանքային պլանները . ներկայացնել հաստատման: Տալ համապատասխան հանձնարարություններ առարկայական մասնախմբերի ղեկավարներին	Սեպտեմբեր	Տնօրեն, փոխտնօրեն, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
13.	Կատարել դասալսումներ, որոնք նույն օրը քննարկել ուսուցչի հետ, հարկ եղած դեպքում դասալսման տեսքում գրել անհրաժեշտ դիտողություններ և առաջարկություններ:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ, մասնախմբերի ղեկավարներ	
14.	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար-խորհրդակցություններ, լսել նրանց հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ:	Ամիսը մեկ անգամ	Տնօրեն, փոխտնօրեններ	

15.	Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր	Ամիսը մեկ անգամ	Տնօրեն, փոխտնօրեններ	
16.	Կազմակերպել բաց դասեր՝ առաջավոր փորձի մատայականացման նպատակով: Կազմել ժամանակացույց՝ նշելով ուսուցչի անուն ազգանունը, առարկան, թեման, դասարանը:	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ. աշխ. գծով	
17.	Ուսումնասիրել քննական առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ. աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
18.	Կազմակերպել առարկայական շաբաթներ	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ. աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
19.	Քննական դասարաններում սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները ստուգելու նպատակով քննական առարկաներից անցկացնել ստուգիչ գրավոր աշխատանքներ	Դեկտեմբեր. Ապրիլ	Տնօրեն, փոխտնօրեն՝ ու/դ. աշխ. գծով	
20.	Ստուգել թեմատիկ, կիսամյակային գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ. աշխ. գծով	

21.	Հաշվի առնելով առարկայի կարևորությունը՝ ուստարվա ընթացքում մեծ ուշադրություն դարձնել մայրենիի դրվածքի ուսումնասիրությանը	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, առարկայական մասնախմբի ղեկավար, ուսուցիչներ	
-----	---	-----------------------------	--	--

22.	Հարատացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնական նյութերով, լաբորատոր սարքավորումներով: Կարևորել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրինություն	
-----	---	-----------------------------	---------------	--

23.	Վերահսկել համակարգչային դասերի կազմակերպումը ուսայլանով նախատեսված առարկաներից	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, օպերատոր	
-----	--	-----------------------------	------------------------------------	--

24.	Հանձնարարել առարկայական մասնախմբերին՝ ուսումնական տարվա ընթացքում հանդես գալ առնվազն մեկ մեթոդա – մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել մասնախմբերի նիստերում:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, Ուսուցիչ	
-----	---	-----------------------------	--	--

25.	Կազմակերպել ինտեգրված դասեր	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, Ուսուցիչ	
-----	-----------------------------	-----------------------------	------------------------------------	--

26.	Վերահսկել դպրոցում գործող խմբակների աշխատանքները	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն, խմբակների ղեկավարներ	
-----	--	-----------------------------	---------------------------------	--

27.	Ուսումնասիրել փորձառու ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում:	Մշտապես	Տնօրեն, ուսումնական գծով փոխտնօրեն	
28.	Կազմակերպել թեմատիկ միջոցառումներ	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով. Ուսուցիչ	

29.	Ստուգել մատենավարությունը և ծրագրերի կատարողականը, հետևել Emis.am կայքում ուսուցիչների կողմից աշխատանքների պարտաճանաչ կատարմանը:	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ, օպերատոր	
30.	Աշակերտներին և ուսուցիչներին ակտիվորեն ընդգրկել „Իմ դպրոցը, և այլ կրթական կայքերի կայքէջին:	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ, օպերատոր	
31.	Վերահսկել և ակտիվ վիճակում պահել դպրոցի պաշտոնական կայքի աշխատանքները	Մշտապես	Փոխտնօրեններ, ուսուցիչներ, օպերատոր	
32.	Աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացման նպատակով բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ:	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեններ, առարկայական մասնախմբերի ղեկավարներ, ուսուցիչներ	

33.	Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին, կազմել նրանց հետ աշխատելու հեռանկարային պլան	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ աշխ. գծով, դասղեկներ	
34.	Կազմակերպել պարզ ընթացակարգով ատեստավորվող ուսուցիչների հերթական խմբի ատեստավորման գործընթացը	Առաջին կիսամյակ	Տնօրեն, փոխտնօրեն ու/դ գծով	
35.	Ստուգել ուսուցիչների օրվա պլանները	Ուսումնական տարվա	Փոխտնօրեն ու/դ գծով	

		ընթացքում, մշտապես		
36.	Վարել ուսուցիչների հաշվառման և բաց թողած ժամերի փոխարինման մատյան	Ուսումնական տարվա ընթացքում, մշտապես	Փոխտնօրեն ու/դ գծով	
37.	Իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը	Սեպտեմբեր	Տնօրինություն	
38.	Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների վերլուծություն.	Կիսամյակների վերջում	Տնօրինություն, մասնախմբերի ղեկավարներ, ուսուցիչներ	

39.	Աշխատանքի ընթացքում ծագած խնդիրների քննարկում	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն, ուսուցիչ	
40.	Սովորողների առաջադիմության վերլուծություն և գնահատում՝ ըստ դասարանների	Կիսամյակների վերջում՝ աշխատանքներից հետո	Տնօրինություն, մասնախմբերի ղեկավարներ, դասղեկներ	
41.	Անդրադառնալ գնահատման 10 միավորային սանդղակի միավորների բնութագրիչներին, հետևել, որպեսզի ուսուցիչները պահպանեն գնահատման կարգը	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ գծով	
42.	Հետևողական լինել գրավոր աշխատանքների՝ ըստ չափորոշիչի գնահատման կարգի նկատմամբ	Ուսումնական տարվա ընթացքում	Փոխտնօրեն ու/դ գծով, ուսուցիչ. մասնախմբի ղեկավար	
43.	Նախապատրաստվել գիտելիքների ստուգումներին	Մայիս	Տնօրինություն	
44.	Ամփոփել քննությունների արդյունքները, ներկայացնել հաշվետվություն ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:	Հունիս	Տնօրեն, փոխտնօրեններ	

# 2023 -2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԱՅՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ձ/Ձ	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարման ժամկետ
1	Հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողների ընդունելության կազմակերպում	<p>Ընդունելության կազմակերպում</p> <p><u>«Հանրակրթական հիմնական ծրագրեր հրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման» կարգի պահանջներին համապատասխան</u></p>	Օգոստոս
2	Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում	<p>Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում</p> <p><u>«Հանրակրթական հիմնական ծրագրեր հրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման» կարգի պահանջներին համապատասխան</u></p>	Օգոստոս

3	<p>Վերաքննությունների կազմակերպում և արդյունքների ներկայացում մանկավարժական խորհրդին</p>	<p><u>«Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա րնթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման» կարգի պահանջներին համապատասխան</u></p>	Օգոստոս
4	<p>Հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում կամ առանձին սեմինարի ձևով</p>	Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների ապահովում	Օգոստոս
5	<p>Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մեթոդական միավորումների առաջարկությունների ներկայացում <u>մանկավարժական խորհրդի նիստում</u></p>	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինում	Օգոստոս

6	<p>Ուսումնական պարապմունքների դասաբաշխում և դասացուցակի կազմում</p>	<p>Դասաբաշխում և դասացուցակի կազմում <u>հաստատության սանիտարական կանոնների և նորմերին»</u> համապատասխան</p>	Օգոստոս
7	<p>Ուսուցիչների կողմից կազմած առարկայական թեմատիկ պլանների ստուգում և հաստատում</p>	<p>Առարկայական թեմատիկ պլաններում չափորոշչային պահանջների համապատասխանության ապահովում</p>	Օգոստոս



